

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1893 Թ. ՀԱՄԱՐ, Ներկայ № 10 լույս տեսնելուց լետոյ, նոյեմբերի 1-ից սկսում է «Մուրճ»-ի բաժանորդագրութիւնը 1893 թւականի համար, «Մուրճ»-ի խմբագրութիւնը լիակոյս է որ սոյն 1892 թւականի բաժանորդները կ'աշխատեն իրանց բաժանորդագրութիւնը վերանորոգելու ցանկութիւնը վաղօրօք լստնել, Ներկայ համարով ուղարկում ենք բաժանորդներից ամեն մէկին 2-2 հատ դրամական ծրարներ, խնդրելով աւելորդները իրանց շրջանում բաժանել:

REVUE D'ORIENT ET DE HONGRIE ֆրանսերէն շաբաթաթերթը իւր № 43 առ 23 հոկտ. 1892 թ. տպել է մի բանասիրական լոգւած նւիրած «Մուրճ» ամսագրին: Թողածը խորագրած է «Une revue arménienne: le Mourtsch» և ստորագրած՝ Յակոբ Զիլինգարեան, Հեղինակը մեծ համակրանքով է վերաբերում դէպի «Մուրճ»-ը, անւանում է նորան «անկասկած առաջին ամսագիրը հայերի մէջ» և վերջացնում է այսպէս՝ «այս պարբերականը առաջին հակական թերթն է, որ ամենից լաւ ի նկատ է աւանում իւր ընթերցողների պահանջները և շահերը»:

ՌԱՅԱՆԷՆՆԻ ՊԱՏԿԱՆՆԱՆԻ գրած քննքի տպագրելու իրաւունքը, Հանգուցեալ պօէտի ալրին՝ տիկին Հռիփսիմէ Պատկանեան լատարարում է հետեւեալը. «Թալտնում եմ որ հանգուցեալի կալքի և զաւակների վրայ խնամակալներ նշանակած ենք՝ ես (հանգուցեալի ալրին), Խ. Խ. Չալիսուշեան և Ի. Մ. Ալաճալեան, և առանց մեր համաձայնութեան՝ պօէտի ոչ մի գրածք չը պէտք է տպագրուի: Միայն արտասահմանում հրատարակող լրագիրները իրաւունք ունեն արտատպել Գամառ-Քաթիկոսիցի, Իմ և իմ զաւակներիս իրաւունքները պաշտպանելու համար, նաև լարգելով հանգուցեալ ամուսնուս վշատակը՝ ես տւեցի սահմանւած հաւատարմութեալ իմ ընտանիքիս, երդեալ հաւատարմատար Գ. Խ. Չալիսուշեանին, որին նույնպէս լանձնարարեցի կարգի բերել հանգուցեալ պօէտի թղթերն ու նամակները:

«Ներկայ նամակը չի վերաբերում Ռաֆայել Պատկանեանի դրածներին մեծ. տիկին Վարվարէ Փանանեանի հրատարակութեանը, որ ալդ աշխատանքը իւր վրայ է առել իմ զաւակներին ապահովացնելու համար միայն և որին հանդուցեալ մարդս իւր կենդանութեան ժամանակ ուղարկեց իւր հեղինակութիւնները»:

«ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԴՐԱԴԱՐԱՆ»-ի հրատարակիչ պ. Յ. Բարխուդարեանը խնդրում է մեզ չափանել, որ «Մանկավարժ. Գրադարան»-ի մէջ տպւած Ս. քահ. Սահակեանի լողւածում «Բարոյական փիլիսոփայութիւն» վերնագրով, պակաս է լռաջարանը, որ սխալմամբ միայն չի տպւել: Յօդւածը, երբ լուս տեսնի առանձին գրքովով, կ'ունենայ պակասորդ լռաջարանը:

Պր. ՄԿՐՏ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ, որ «Մուրճ»-ում վարում է վրաց ընտիր վէպերի թարգմանութիւնը, խնդրում է մեզ չափանել, որ հալոց բնի համար նա թարգմանել է «Հայրենիք» գրաման, որ փոխադրւած լինելով ֆրանսիական «La patrie» պիեսից, մեծ լաջողութիւն ունեցաւ վրաց բերի վերայ:

ՆՈՐ ՍՍԱՅԻԱՆ ԴՐՔԵՐ, բացի գրախօսութեան մէջ վիշաճներէրից՝

9) ՂԱԶԱՐԵԱՆ, Յակոբ. — «Ֆէրօ». քրդական լեզենդա. Հրատ. «Ազրիւր» և «Տարազ» պատկերազարդ հանդէսների թիֆլիս, տպարան Աթօր Տիգրան Նազարեանի, 1892 թ., գինն է 15 կոպէկ:

10) ՄՈՒՐԱԴԵԱՆՑ, Մեղիսեղեկ Եպիսկ. — «Հովական աստածաբանութիւն» Կ. Պոլիս, տպարան Ն. Կ. Պէրպէրեան, 1892 թ., գինն է?:

11) ՄԱՌ, Նիկ. — «Ամառնային ուղեորութիւնից դէպի Հայտ». նկատողութիւններ և քաղածներ հայկական ձեռագրերից, Թարգման. Ոնտրիփոս Անտիեան, Վիեննա, Միխիթարեան տպ. 1892 թ., գինն է 1 ֆր. 25 սանտիմ:

12) ԱՂԱՑԵԱՆՑ, Ղ. — Մեր ուսուցիչներին ընկերական նէր. «Ազրիւր Տարազ-ի» պրէմիա. Տպ. Տ. Նազարեանցի 1892 թ.

13) ВЕСЕЛОВСКИЙ, Юрій. — Изъ истории армянской сцены, արտատպւած Театръ ամսագրերից:

Խմբագիր՝ ԱԻԵՏԻՔ ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ

Հրատարակիչ՝ ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱԶԱՐԵԱՆՑ